

## IV

## ՓՕՑԼՎԼՈՐ

Ե. Անիջնովի.

Ֆօլկօր՝ բառացի ժողովրդագիտութիւն ասել է։ Այս տերմինը հնարևեց Անգլիա XIX-րդ դարու կիսում՝ մի խօսքով՝ որոշելու համար հին հաւատալիքները, նախապաշարմունքները, սովորովթները, ծէսերը, առաջները, թովչութիւնները, երգերը և առակները, որոնք մինչև այժմ աւանդաբար պահպանւած են հասպակ ժողովրդի մէջ (տե՛ս յօդ. Thoms-ի «Athenaeum»-ում, 1846թ.):

Հին աշխարհի ժողովրդական երգերից մեզ հասել են հատակտորներ (հաւաքւած Berck-Hiller-ի ձեռքով, «Anthologia Lyrica», Լալացիդ, 1897), հեքեաթներ (օրինակ՝ Ամուռի և Փսիխէի մասին Ապուլէի պատմւածքը) և առաջներ (Բինդերի, հաւաք. «Novus Thesaurus Adagiorum»-ում, Լալացիդ, 1866 և Otto, «Die Sprichwörter der Römer», Լալաց., 1890): Այս բոլորը պահպանւել է պատահարար. հին դպրութեան մէջ Փօլկօրը ամենևին ուշադրութեան չէ առնւած։ Հօրացիոսը ժողովրդական երգերը օրոքրիա rustica (գուեկական նախատինք) էր անւանում. դիւցաբանական հնութիւններին վերաբերեալ գըրւածքներում, օրինակ, Մակրօրիկի մօտ և Օվիդի «Fasti»-ում, սակայն լրջօրէն հաւաքւում էին տեղեկութիւններ ժողովրդական հաւատալիքների և ծէսերի մասին։ Դա հեթանոսական Փօլկօր էր:

Քրիստոնէութեան տարածւելովը հեթանոսութիւնը ամենից երկար պահպանւեց դիւղերում. այս՝ դիւղական—paganus —

բառը կամաց-կամաց հեթանոսի հոմանիշ դարձաւ (այստեղից՝  
պօգանա Ենքա, պիղծ կրօն, le paganisme): Շքեղ քրմական հե-  
թանոսութիւնը իր տօնախմբութիւններով և խաղերով վաղուց  
արդէն անհետացել էր, երբ գիւղերում շարունակում էին գո-  
յութիւն ունենալ և կարծես, թէ մինչև անգամ զօրեղանում  
էին հին հոռոմէական հաւատալիքները: Այսպէս, օրինակ, Վա-  
լենտինիան կամսեր ժամանակի տոմարներում անհետացած պաշ-  
տօնական հեթանոսական տօների փոխարէն նշանակւած են ժո-  
ղովրդական տօնախմբութիւններ (տե՛ս «Calendarium rusticum»  
հրատ. Մոմսէնի «Corpus Inscript. Latin.», I): Քրիստոնէական  
եկեղեցին համբերատար էր գէպի հեթանոսական Փօյլկօրը: Եր-  
բեմն - Երբեմն նա աշխատում էր անգամ նւիրագործել և օրի-  
նադրել գիւղատնտեսական ծէսերը (տե՛ս Usener, «Religions-  
geschichtliche Untersuchungen», Բոնն, 1889, հ. II.): Ազդ ծէ-  
սերը փոքր առ փոքր սկսան լարմարցնել նորամուտ քրիստոնէա-  
կան տօներին: Անասուններին առաջին անգամ դաշա քշելու տօնը,  
օրինակ, պատահեց Սուրբ Գէորգի օրը: Ամառնալին արևադար-  
ձր նոյնացրին Իվանօվ դենի-ին: Յորենի հունձքի և ալգեքա-  
զի տօները ընկնում էին մերթ Եղիա մարգարէի, մերթ սուրբ  
Մարտինի օրերին: Յունարի Սատուռնեան տօները միացան  
Ծննդին, Մարտ ամսինը՝ Բարեկենդանին: Զատիկը փոխարինեց  
ժողովրդական տոմարում Մարտի հին գիւղատնտեսական տօնը:  
Սուրբ Գէորգը, լետոյ սուրբ Թէոդորը, ս. Թօրիսը, ս. Նիկողա-  
յոսը հովանաւորներ դարձան անասնապահութեան և վարուցան-  
քի, Եղիա մարգարէն՝ ամպրոպածիդ և «Հնձւոր» և ալլն: Հե-  
թանոսական Փօյլկօրը դարձաւ քրիստոնէական (քրիստոնէական  
Փօյլկօրի մասին տե՛ս А. Н. Веселовскій, «Разысканія въ  
области духовнаго стиха»; А. Кирпичниковъ, «Св. Геор-  
гій и Егорій», СПБ., 1878 և ալլն):

Քրիստոնէական եկեղեցին սկսում է հալածել հասարակ ժո-  
ղովրդի հաւատալիքները և՝ այսպէս ասած, Եղիսաւարութիւն VI դարում  
Առ և Տօլեդո քաղաքներում գումարւած ժողովներում: Դրան  
վերաբերեալ յանդիմանիչ գրականութեան լիշատակարանները  
ամենաթանգ աղբէւր են Փօյլկօրի: Այսպիսի են՝ սր. Ելիդիսի  
երեւի քարոզը, Մ. Թուկարի շարադրութիւնները, «De Cor-

rectione rusticorum» (*տե՛ս Caspari Kirech. Gesch. Anecdota Christiania», 1883)*... Սակայն, որքափ չնչին էր ալդ յանդիմանութիւնների հետևանքը, երևում է այն հանգամանքից, որ դաշտերի գարնանային մաքրիչ անդաստանօրհնէքին (Illustratio agri; Cato, De agric. 141) գեռ. XIV դարում Գերմանիայում մասնակցում է քահանան, իսկ Ռուսինների մօտ այդ հանդէմները քրիստոնէական թափորների կերպարանք էին ստացել: Շատ նիւթեր Փոյլկօրի մասին բովանդակում է իր մէջ միջնադարեան բանաստեղծութիւնը, որ այնքան մօտ է ժողովրդական դրականութեան: Այդ նիւթերը ցրւած են Պոօվանափ վիպասանների (տոռովիեօր) և դերմանական քնարերգուների (միջնեղինգեր) ուօմանսներում և երգերում: Օրինակի համար՝ XIII դարու տոռովիեօր Աղամ դը Դալ յօրինեց Ծննդեան մի երգ՝ նման ուռս կոլյաձկաներին \*) (Noči). Է իսկ «Աղամի խաղ» մի զրամատիքական պիեսում օգտուեց յայսնի հէքեաթից, ուր երեք փէրիններ ապագայ են գուշակում և դժբախտութիւնը գուշակում է յատկապէս չար փէրին այն պատճառով, որ նրա համար տեղ չեն պատրաստել խնջուքում:

Վերածննդեան դարում բանաստեղծութիւնը նոյնպէս չէ քաշւում ժողովրդական հաւատալիքների վրա ակնարկելուց և ժողովրդական բանահիւսութիւններից քաղւածքներ անելուց: Շէքսպիրի երկերում Փոյլկօրի մասին եղած տեղեկութիւնները առիթ դարձան ուրոցն մենագրութեան. Dyer, «The Folklore of Shakespeare» (L. 1875): Երբ վրա հասաւ Ռեֆօրմացիայի դարը՝ սկսում են կրկին հալածել ժողովրդական ծէսերը և հաւատալիքները: Այն ինչ որ կաթօլիկ եկեղեցին թուլատրում էր, իսկ երբեմն նաև խրախուսում, Ռեֆօրմացիայի քարոզիչները մտրակում են իրեւ կուապաշտութիւն: Այստեղից առաջ է գալիս աղբիւրների մի նոր շարք Փոյլկօրի մասին... «Сто Главъ»-ի և ապա «Духовный регламентъ»-ի հրատարակութիւնով Ռուսիայումն էլ սկսում են հալածել խեղկատակութիւնը և ժողովրդական սովորութները: Ֆոյլկօրին վերաբերեալ վերջին երկա-

\*.) Եւ հայոց «Աւետիսին»: Ծ. Խ.

սիրութիւնները յանդիմանիչ բնաւորութիւնով... ծագում են նոյնպէս բողոքական շրջանից:

Ֆօլկորի նիւթերի զրի առնելը, առանց որևէ կողմնակի նպատակների, սկսում է XVIII դարու վերջից: Առաջին հաւաքողները վերաբերւում են Փօլկորին՝ իրրե տարօրինակ կամ նորանշան մի բանի: Ալսպէս է, օրինակ, Brand-ի «Observations on the popular antiquities», առաջին անգամ լոյս ընծալւած 1813 թ.... Նոյն աեսակից է և Chesnel de la Charbouclais-ի գիրքը, որի հեղինակը de Nore կեղծ անունով հրատարակեց «Coutumes, mythes et traditions de la France» (II, 1846): Նոյն շարքին վերագրելու է և դերմանական առակների առաջին հաւաքածուն, որ ժողովեց Մուդէուսը XVIII դարու վերջում:

Ռուսաստանում ռուսաց հին վարք ու բարքի հետաքրքրութիւնը շարժւեց Կատարինէ Բ. կայսրունու դարում: Սկզբում այս արտայալտւեց գեղարւեստական գրականութեան մէջ՝ դրամաներում, օպերաներում, որոնք իրանց նիւթերը քաղում էին ժողովրդական աւանդութիւններից և նիստուկացից: Այս՝ դեռ քիչ հետազոտած, գրականութեան մէջ առաջին տեղը դրաւում է Չուկովը: Նա առաջինը փորձեց հրատարակելու ժողովրդական երգերը: Նման հետաքրքրութեան հետևոնքն է նաև Ռուպենսկու «Опытъ повѣствованія о древностяхъ русскихъ» (Харьковъ 1811 г.): XIX դարու սկզբում լոյս են աեսնում Սахаровъ-ի Շնէգրևъ-ի և Տերещенկո-ի երկասիրութիւնները: Հարաւային սլաւոնական աղքերի մօտ Փօլկորի նիւթերի հաւաքումը սկսում է Վոկъ Կարաջիչ-ի անխոնչ գործունէութիւնով: Հարաւային-ռուս Փօլկորը առաջին նւագ մշակւում է լեհացիների աշխատութիւնով (Ժիգոտա Պաուլի, Գոլեմբիէվսկի և այլն):

Նոր հոսանքներ Փօլկորի մէջ առաջացրին ոօմանտիկ հովերը: Հերդերի «Stimmen der Völker» և Գոկմմի «Հերեաթները» առանձին կենդանութիւն տվին Փօլկորին և շատ զօրեղ համակրութիւն արծարծեցին դէպի նա: Այդ ժամանակից, յատկապէս Գոկմմի «Դերմանական դիւցաբանութեան» շնորհիւ, սկսում է ֆոյլէւն նէ-նէրի գերական հակուճ: Սկզբում Փօլկորը ներկայանում էր բացառապէս իրրե մնացորդ յոյն, հոռմէ-

ական, ոօմանական աղգերի և նոր-լունական կրօնի որպէս և գերմանական Օդինի և սլաւոնական Պեռունի պաշտամունքի: Նախնական կրօնները այս դէպըում հասկացւում էին՝ իրրե դէ-ցանու-նիւններ, այսինքն՝ իրրե բանաստեղծական պատմութիւններ ասաւածների մասին: Դիւցաբանները առաջնորդւում էին դուտ ոօմանտիկ ձգտումներով դէպի «ալեոր հնութիւնր»: Ամենից առաջ նրանք ճգնում են լրիւ վերականգնել նախնիքների հաւատաքրի: Ուուսաստանում այս ուղղութեան հայր ճանաչերւ է Աֆանասյեվին: Նրան հետեւում են Սուեզնեվսկից, Կոստոմառօվի, Օռ. Միլլեր, Եֆիմենկօ, Բառսօվ, Թամինցին. ինչ առօրեայ երեւլթների մասին էլ լինի խօսքը ժողովրդական հէքեաթներում, երգերում և ծէսերում, դրանք դիւցաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից մեկնուում են իրրե անդրադարձում հեթանոսական կրօնի բարդ սիստեմի: Բը Եւնաների և ժողովրդական վէպերի, հէքեաթների և քնարերգա-ժողովը դաշտական երգերի հերոսները համարւում էին ասաւածներին փոխարինողներ: Երգերի, հէքեաթների և ծէսերի վրա ժամանակակից առօրեայ կեանքի պայմանները միայն խառ են կադմել, որի հեռացնելովը կարելի է հասնել մինչև բուն առասպեկները, որոնք ամեն բանի հիմքն են: Այսպիսի կարծիքի էր Բուլղարեվր:

Դիւցաբանական դպրոցը Փօլիլօրում զարդանում է համեմատական լեզւագիտութեան առաջդիմութիւն ազդեցութիւնով: Ինչպէս որ հնդիկ-եւրոպական լեզուները՝ նրանց համեմատական ուսումնասիրութիւնով զբաղւելիս, համարւում են հետեանք բաժանման կամ նիւղաւորման մէկ հնդիկ-եւրոպական նախալեզւի, այնպէս էլ յոյն, հոռոմէական, գերման, սլաւոն և հնդիկ որիշ որիշ դիւցաբանութիւնները ճանաչւած էին իրրե հին Արեաց հնագոյն կրօնի աստիճանաբար լետին ճիւղաւորումներ: Լեզւագիտութեան համար սահմանւած եղանակները գործադրելի էին համարւում նաև Փօլիլօրի վերաբերմամբ: Հէքեաթների և երգերի ուրոյն բովանդակութիւնները, այլև այլ հնդիկ-եւրոպական ազդերի ծէսերի ուրոյն գործողութիւնները նոյնչափ նրման ճանաչւեցին իրարու, որպէս և առանձին բառերի արմատները: Այսպէս առաջացաւ համեմատական Փօլիլօրը՝ իրրե զուգահաւասար համեմատական լեզւաղիտութեան ինչպէս որ հա-

մեմատական լեզւագիտութեան կենդրոնը կազմում էր Սահս-կրիտի ուսումնասիրութիւնը, այնպէս էլ համեմատական Փօլիկ-լորի կենդրոնը եղաւ հնդկական հնագոյն Վեդաների (սրբազն դրեերի) դիւցաբանական մեկնութիւնը:

Լեզւագիտութեան մէջ տարածւած էր այն կարծիքը, թէ լեզուն նախնականապէս բանաստեղծական արարչութեան գործողութիւնն է. կրօնը նոյնպէս հանաչւեց իր բնութեան բանաստեղծական ոյժերի մարմնացում: Հետաքրքւում էին միայն այն խնդրով, թէ սկզբնական արիական կրօնի մէջ անծնաւորում էին արդեօք երկնային լուսատու մարմինները, կամ մթնոլորտային երևոյթները և կամ բուսականութիւնը՝ իր բոլոր տարրեր տեսահներով: Առաջին այսպէս ասած, աշխանային թէօրիայի հետևողներն էին ֆրանսկելտական դիւցաբանութեան հետաղոտող Գէդօզր... և Ռուսաստան՝ պրոֆ. Վոեվոդսկի: Երկրորդ թէօրիան ստեղծւեց Ա. Կունի և Շվառցի միահամուռ շանքերով: սրա աղջեցութիւնն է կրում և Աֆանասևիի լալտնի գրւածքը, որի խորագիրն անդամ փոխ է առած Շվառցից: Երրորդ թէօրիան պատկանում է Մաննհարդտին. վերջին ժամանակներս սա առանձին ծաւալ ստացաւ Մաննհարդտի հետևողների ազդեցութեան ներքո՝ Սօրուկայի և Ֆոազերի:... Մաննհարդտի հայեացքներին հետևում է և Ռոշէր, «Ausführliches Lexicon der Griech. Röm. Mythologie» հանդիսի խմբագիրը:

Թօլիկօրի մէջ գործադրած դիւցաբանական թէօրիաների գլխաւոր պակասութիւնը նրանց եղբակացութիւնների անապացուց լինելն է: Դրականութեան պատմիչները հարկադրւած էին մինը միւսի ետևից հերքել դիւցաբանների մեկնութիւնները, որ նրանք տալիս էին ժողովրդական վէպի և հեքեաթների պէս-պէս նիւթերին: Նրանց շրջանում գոյացաւ միանգամայն տարրեր մի սիստեմ՝ բացատրելու զանազան ազգերի ժողովրդական բանահիւսութեան մէջ նշմարւած նմանութիւնը: Դա արդէն բոլորովին առնչութիւն չունի լեզւագիտութեան եղանակների հետ: Այդ սիստեմը կոչում է գաղթումի կամ փոխառութեան թէօրիա: Գրականութեան պատմիչները փոքրառփոքը կորղեցին դիւցաբաններից հա-

մարեւա ամբողջ ժողովրդական բանահիւսութիւնը: Ա. Ն. Պը-պինը ասում է, թէ որևէ զաղափար հին Սլաւների կրօնի մա-սին կարելի է կաղմն՝ հիմնւելով միայն արդի շինականութեան ծէսերի վրա արած դիտողութիւնների վրա: Ծէսերի ուսում-նասիրութեանը շատ նւազ կերպով հնարաւոր եղաւ գործադր-րել փոխառութեան թէօրիան: Լատինական calendarae բառի տարածութիւնը ուրոյն նշանակութիւնով համարեա բոլոր եւրո-պական աղջերի ծիսակատարութիւնների մէջ \*) (КОЛЯДЫ, խ-λառտաւ, colindele, calendas mayas և այլն) պարզ ցոյց է տա-լիս, որ հնագոյն Փօլկլօրը աղջել է ժամանակակից Փօլկլօրի վրա: Գաղթումի մի սոյնպիսի իրողութեան վրա ակնարկում է նաև dies rosae \*\*) (Rosaria, Roussosάլιա) մի հին տօնի ճա-կատադիրը, որ Սլաւների մօս դարձել է Ուսուալների շաբաթ՝ տարով իր անունը յաւերժահարսներին (ռուսակա): Բայց դրանք միայն մասնական փոխառութիւններ են, որոնք հնարաւոր եղան այն պատճառով, որ հին ծիսական դաղափարը՝ մուտ գործելով ըրիստոնէութեան հետ՝ հանդիպեց Սլաւների մէջ նմանօրինակ ծիսական երևոլթների: Վերշին ժամանակներս փոխառութեան թէօրիան կերպարանափոխւել է և դարձել այսպէս կոչւած մէ-կովին-կորու կամ հանդիպող հոտանիների թէօրիա: Փոխառու-թեան թէօրիաի թոր կողմք այն է, որ նա ամենեին չէ բա-ցատրում այս կամ այն հէքեաթի նիւթի, երդի եղանակի կամ ծիսակատարութեան բուն ժագումը, այլ միայն ուսումնասիրում է արդէն առաջ եկած իրողութեան կամ երևոլթի տարածման խնդիրը: Այս դէպքում փոխառութեան թէօրիան չէր կարելի հակադրել դիւցարանական թէօրիալին:

Ա'լ բան է մարդարանական թէօրիան, որ ծագեց Տալլօրի և Բաստիանի երկերի \*\*\*): լրս տեսնելովք և լանդի ալդ թէօ-րիան Փօլկլօրի վրա գործադրելովք: Մարդարանները՝ ընդլալ-նելով իրանց դիտողութիւնները հնդիկ-եւրոպական աղջերի սահ-մաններից դուրս, գոտան հնդիկ-եւրոպական Փօլկլօրի ամենա-

\*) Համեմ. և հայոց կաղանդը: Ծ. Խ.

\*\*) Արդեօք նոյն աղջեցութիւնը չէ՞ նկատում և հայոց վարդապառ տօնի վրա: Ծ. Խ.

\*\*\*) Տես գերը, էջ 14:

տարածւած գաղափարները ոչ միայն սեմական ցեղերի, Զինայ, Թիւրքաց, Մողոլների մէջ, այլ և ժամանակակից վարենիների մօտ: Մարդաբանական դպրոցի կարծիքով՝ բոլոր մարդկութիւնը անցնում է միւնուն մտաւոր զարգացման շրջանները (ստաղիա): Այդ շրջաններին համապատասխանում են որոշ հասկացողութիւններ և դաղափարներ, որոնք ծաղում են բոլորովին ինքնուրոյնօրէն շատ աղղերի մէջ: Ժամանակակից Փօլիլորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հին հասկացողութիւնների և դաղափարների մնացորդներ: Համայն մարդկութիւնը անցել է՝ օրինակ, դիտակցութեան այն ձեից, որի շնորհիւ նա դիմում էր Տագրաժողովունիւնների և Շառաւունիւնների: Դրա համար գործադրուում էին զանազան միջոցներ, բայց նախահիմքը միւնոյնն էր: Անձրև բերել տալու դիտաւորութիւնով վայրենին էլ, ժամանակակից գիւղացին էլ համակային Շառաւունիւն են դորժ դնում. զրա համար նրանք կամ խարոյկ են վառում՝ ծուխի միջոցով մրրկացին ամպ ձևացնելու, կամ ջուրն են ընկնում՝ առաջուց թրցւած լինելու համար, կամ մի առանձին խրտկիլակի վրա չուր են ածում \*): Այսպէս են օրինակ, Պատագօնացի անձրևաթովինների խարոյկները, Գերմանիալում Մայիսեան ծառի, Սլաւների Մարենալի կամ Կուպալի ջուրը նետելը, մերբական Թօդոլիցալի, լոյն Պերպեռուգալի, գերմանական Վասսերֆօդելի վրա ջուր ցանելը: Աղջականութեան սկզբնական սիստեմի հետեւանքը պարէճիանը եղաւ \*\*): այստեղից առաջացաւ բոլոր աղղերի մօտ գորութիւն ունեցող ծառի, զրի և մի քանի կենդանիների կոյլոր (եղ, արջ և ալյն): Տօտեմիսմի հետ կապւած է այսպէս կոչւած պալուն \*\*\*): այնպիսի պատմւածքներ, ինչպիսին է «Ամուռ և Փափսէս հէքեաթը՝ հիմնւած տարուի գաղափարի վրա, պատահում են ամեն տեղ»: Ամուռնութեան սկզբնածեւերի հողի վրա ծագեց լեհագոր\*\*\*\*): Լեւիրատի թէօրիան է, որ պէտք է հիմք ծառալի

\*) Հմմտ. նաև հայոց սովորութիւնը Վարդավառի տօնին մէկ մէկու կամ պուրաւտիկինի (պուրատիկին, նուրին), վրա ջուր թափելը: Ծ. Խ.

\*\*) Այս մասին տօն վերը՝ էջ 15:

\*\*\*) Սրբազն իրեր կամ անժինք, որոնց դիպչելը արգելած է մահան պատժով: Ծ. Խ.

\*\*\*\*) Մի սովորութիւն (լատ lēvir, ոռա ծեւեր, հալ տայգը), որով տայգը կին է առնում իր ամուռնազուրկ հարսին—իր մեռած եղբօր կնոջը:

բացատրելու այնպիսի համբալին վիպական ընդհանուր տեղեր, որպիսին է Ողիւսի Խթակէ կղզի վերագարծի պատմութիւնը և Աղեօշա Պոպօվիչին և Դորոլինեալ Նիկիտիչի վէպերը (բրիլինա): Տե՛ս Crooke «Folk-Lore», IX, 1889 էջ 97 և A. Վեսելովսկի, ԺՄՀՊ. 1898.)

Մարդաբանական թէօրիան չէ հակասում փոխառութիւնների թէօրիալին. այս վերջնիս ականաւոր ներկալացուցիչներից շատերը ամբողջովին ընդունում են և մարդաբանական թէօրիան: Դրան մեծաւ մասամբ հակւեց վերջերս և Աղեքսանդր Վեսելովսկին: Դիւցաբանական և մարդաբանական դպրոցների ամենագլխաւոր տարբերութիւնը այն է, որ վերջինս ժամանակակից ֆոյլկօրի կաղմի մէջ տեսնում է ոչ միայն լոկ կրօնական հաւատալիքների մնացորդներ: Անդամ ժողովրդական ծէսերը՝ մարդաբանների կարծիքով, մեծաւ մասամբ ոչինչ առնչութիւն չունին դիւցաբանութեան հետ: Հարսանիքի ծէսերը հետաքրքրական են, օրինակ, իրրեւ վերին աստիճանի հարցասիրական նիւթ սկզբնական ամուսնութիւնը ուսումնասիրելու համար. մինչև անդամ այսպէս կոչւած դիւղատնտեսական ծէսերը ներկայումս մեկնուում են իրրեւ թուփութեան և մաքրութեան միջոցներ, այս թէ իրրեւ հեթանոսական կոյլտուրի մնացորդներ: Եթէ Պրֆաննէնշմիդ («Germanische Erntefeste», Հաննօվեր, 1878) կարծում էր, թէ դիւղատնտեսական ծէսերը կը նպաստեն ծանօթանալու հին Գերմանների դիւցապաշտութեան ձևերին, դրան ներհակ Ֆուազեր («Golden Bough») գարնանալին և աշնանալին ծէսերի մեծագոյն մասը բացատրում է իրրեւ սկզբնական կախարդութեան (մագիա) միջոցներ: Իր գրքի ներածութեան մէջ, ուր նա աւանդում է իր հայեցակէտը, կախարդութիւնը նա մեկնում է աւելի իրրեւ գիտական, քան թէ կրօնական թէօրիա: Այսպէս ուրեմն՝ ֆոյլկօրը հանդիսանում է իրրեւ անդրադարձում այնպիսի մի հին շրջանի մարդկութեան կեանքում, որ աւելի կանուխ էր, քան կրօնի, իրրեւ գիտակցութեան ուրոյն ձևի, կազմւելը: Ինչպէս արդարացի նկատեց Շոլլեկ, («Psychologie der Naturvölker», Լայպց. 1900) առաւել ճիշտ կը լինէր ասել՝ սկզբնական աշխարհակեցողութիւն, քան թէ սկզբնական կրօն, որովհետև առաջին խօսքը ընդդրկում է թէ վի-

լիսովայութիւնը, թէ կրօնը, թէ իրաւունքը և թէ գիտութիւնը։ Նա բոլորովին նշտօրէն է օրոշում՝ ժամանակակից մարդուց տարբեր ձեռվ զուգադրւած՝ համոզմունքների, տեղեկութիւնների և մտապատկերների այն զանգւածը (կօմպիէրս), որ դրդում է սկզբնական մարդուն դէպի ալս կամ այն փարմունքը, սահմանում է նրա խորհրդածութիւնների ալս կամ այն կարդր Ֆոլկ-Լօրե»-ում, 1901), թէ «կախարդութիւն» տերմինը այնքան էլ յարմար չէ։ Սկզբնական թովչութիւնները և մաքրումները դեռ չեն կարող կախարդութիւն կոչւել. դրանք չափազանց պարզ և անմիջական են։ Սակայն ընդհանուր առումով Ֆոլկերի հայեցակէար միանգամայն ուղիղ է։

Այսպէս ուրեմն իր արդի ձեռվ՝ Փօլկլօրը դարձաւ բացառապէս նկարագրական գիտութիւն։ Նա չունի ոչինչ ինքնուրուն նպատակներ և միայն ծառալում է իր նիւթերով սօցիօլոգիայի զանազան նիւթերին։ Փօլկլօրի անհրաժեշտութիւնը դրում է գեղագէտը այն չափով, որ չափով որ նա զբաղւում է բանաստեղծութեան արւեստով և կամ ընդհանրապէս արւեստների թէօրիալով (տե՛ս, օրինակ, Շէռէր, «Պօէտիկ», Թեոլին., 1888)։ Կրօնների պատմագրին Փօլկլօրը անհրաժեշտ է սահմանելու կրօնական գիտակցութեան հնագոյն սկզբնական ձեւերը։ Նրա օգնութեան դիմում են և իրաւագիտութեան պատմիչները։ Փօլկլօրից օգտուում է բնականաբար և գրականութեան պատմէլը։ Փօլկլօրի և գրականութեան սահմանագծում կանգնած են Գաստոն Պարիսի երկասիրութիւնները, Ա. Ն. Վեսելովսկու, Բեդեալի, Լիբուկստի, Գաստերի և ուրիշների։ Փորձեր են եղել Փօլկլօրի ձեռք բերած տեղեկութիւնները գործադրել և ազգագրութեան վերաբերմամբ (տե՛ս օրինակ, Gomme, «Ethnologie F., Լայպցիդ, 1893)։ Փօլկլօրական հետազոտութիւնների հետևանքներ՝ գիտական նպատակների համար ալսպէս բազմատեսակ գործադրելու առաջ՝ Փօլկլօրի մասնագէտները սիրով ստանձնում են նիւթեր հաւաքընների համեստ դերը միայն։ Փօլկլօրիստներից շատերը հակւեցին դէպի սոսկ նիւթեր հաւաքելը, առանց փորձելու սիստեմի վերածելու։ Նրանց, մանաւանդ թէ գիտականօրէն մեկնելու՝ նաև առաջարկած թէօրիաների բազ-

մատեսակ լինելու պատճառով։ Բուն իսկ նիւթեր հաւաքելը՝ նկատի առնելով բոլոր դժւարութիւնները մինչև անգամ այն դէքըում, երբ հաւաքողը կենդրոնացնում է իր գործունէութիւնը մի որոշ շրջավարում, ընդունակ է կլանել մի մարդու բոլոր ոչերր։ Այս պատճառով՝ հաւաքողական երկերից շատ սակաւներն անգամ փորձ են անում գտնելու իրանց հրատարակած հէքեաթների, երգերի, առածների և ծէսերի նկարագրութիւնների նմանատիպ օրինակները (պառալլել)։ Այս տեսակ փորձերից ազքի են ընկնում Զէկօրսի անգլիական, Շէնէ-անուի ռօմանական և Կոսկէնի ֆուանսական հէքեաթների հրատարակութիւնները, իսկ ժողովրդական երգերից՝ Չալդրի՛ անգլիական, կոմս Նիգուալի՛ պիեմոնտական և Ռոլանդի՛ ֆուանսական երգերը։ Հաւաքողները սովորաբար բաւականանում են միայն հում նիւթի հրատարակութիւնով։

Ֆոլկլորի նիւթերը զրի են առնւում ներկայումս ոչ ժողովրդի բերանից միայն։ Արևմտեան Եւրոպայում դրա ժամանակը անգատունալի կերպով անցել է արդէն։ Նոյնը պէտք է ասել մեծ մասամբ և Ռուսիայի ու Ալաւ ազգերի համար։ Եթէ ՏԻԿ դարու սկզբում ժողովուրդը դեռ լիշում էր հնութեան կտակած շատ աւանդութիւններ, այժմ՝ զրագիտութեան տարածելովը և դպրոցներում պարտաւորիչ հաւասարեցնող կրթութեան մուտ գործելովը, այդ ժամանակը անցած պէտք է համարել Վերշին ժամանակի հաւաքողները շատ քիչ նիւթ են գտնում և հարկադրւած են երբեմն բաւականանալ նաև այնպիսի երգերով ու պասմածքներով, որոնք ակներեւ զրաւոր ժագումն ունին։ Արդի Ֆոլկլորիստները այս պատճառով աւելի ու աւելի ստիպւած են լինում դիմել հին տպագրւած և ծեռագիր շարադրութիւններին, ուր պատահաբար պահպանւած է ժողովրդական կացութեան կամ առհասարակ ժողովրդական բանահիւսութեան արս կամ այն մանրամասնութիւնը։ Հին քարոզներ, դատաստանական ակտերը, երգարանները, լիշատակարանները, ուղևորութիւնները և այլն ամենալուրջ կերպով հետազոտում են այժմ Ֆոլկլորական նպատակներով։ Այս տեսակի աշխատութիւն է ներկալացնում սիցիլիացի Ֆոլկլորիստ Պիտրէի հրատարակութիւնը «Biblioteca di Tradizioni populari

sicilianու, Պալեռմօ (լոյս է տեսել մօտ 20 հասար): Պիարէին գուստական Փօլկլօրի հիմնադիր համարելու է: Նրանից յեսով զալիս են՝ Փոռթուգալիայում Լէյաէ դէ Վասկօնանելոս և Բուադա, Զէլսերի մօտ՝ Զիբրտ, Լեհացւոց՝ Կոլլբերդ, Տիբրօլացւոց՝ Ցինդեռլէ, Փոքր-Ռուսիալի՝ Զուբինակիր, պրօֆ. Սումյով, Վոլկով և այլն, Սպիտակ Ռուսիայում՝ Շէն և Խօմանօվ: Բոլոր երկրներում Սիցիլիայից մինչև Ֆինլեանդիա, արևելեան Սիրիուց մինչև Շվեդիա, Իոլանդիա և Փոռթուգալիա կազմւեցին աեղական շրջաններ և ընկերութիւններ, որոնք առանձին խնամքով Փօլկլօրի նիւթեր էին հաւաքում:

Ռուսիայում վերջին ժամանակս առանձին ուշադրութիւն է դարձրած արևելեան - Ռուսաստանի և Սիրիուի այլազդիների, Կովկասեան ցեղերի, Լիթւալի Փօլկլօրի վրա: Երբեմն, օրինակ, Castren-ի Երկերում «Vorlesungen über die Finnische Mythologie» (S.-Pēt., 1853), հետաքրքրութիւնը կենդրոնանում էր զիւցաբանութեան վրա: այժմ հետազօտողները կանդ են առնում համեմատական Փօլկլօրի հայեցակէտի վրա: Ռուսաց սահմանադրուխ գաւառների հետազօտողների թւին պատկանում են Վ. Միլլէր, Մ. Կովալեվսկիի — Կովկասի, Վոլտեր — Լիթւո — Լաթիշ ցեղերի, Սմիռնով, Պերվուխին, Եադուխնցեվ և Պօտանին — այլազդիների: Սիրիուի հիւսիս-արևելեան ցեղերը առանձին կերպով նորերս ուսումնասիրել են Սէռօշէվսկի և Բօգուազ (Ճան): Անդլիայում հետաքրքրութիւնը արձարձւեց դէպի Հնդկաստանը, և դարձեալ ոչ թէ դէպի հին հնդկական դպրութիւնը, այլ այնտեղ ապրող ցեղերի Փօլկլօրը...\*):

Թարգմ. Խ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ.

\*.) Ֆօլկլօրի գրականութիւնը՝ բացի այս յօդածում յիշածներից, կարելի է գտնել և ընդհանուր ու մասնաւոր ազգագրական երկերում և պարբերական հրատարակումներում: Ցես վերը՝ էջ 34—36: Մ. Խ.